

ԿԱՐՄԻՐ-ԲԼՈՒՐԻ ՆՈՐԱԳՅՈՒՏ ՍԵՊԱԳԻՐ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅԱՆՆԵԱՆ

Ուրարտական VII-VI դարերի քաղաք-ամրոց Թեյշերախնիում (Կարմիր-բլուր), որն ընկած է Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում, սխտեմատիկարար կատարվող հնադրական պեղումները տարեցտարի ի հայտ են սերում նորանոր հեաքքերի նյութեր, որոնք կոչված են բնութագրելու հին-արևելյան ուրարտական պետության՝ Արարատյան դաշտավայրում հիմնադրված այդ վարչատնտեսական կենտրոնի, ինչպես նաև Կուարլի-նի կամ Կուրլի-նի ամրոցի, տնտեսական զարգացման մակարդակը։ Պեղված բազմաթիվ ու բազմապիսի հնադրական նյութերի շարքում իրենց յուրահատուկ տեղն են զբաղում կավե սեպագիր աղյուսակները՝ ամրոցի արքայական տնտեսական արխիվի այդ հիանալի նմուշները¹։

Հիշյալ սեպագիր աղյուսակների տվյալները պարունակում են ավելի ու ավելի նպաստելու մեր գիտելիքների ընդլայնմանը՝ Թեյշերախնի քաղաք-ամրոցի և Կուարլի(նի) կամ Կուրլի(նի)² ամրոցի տնտեսական կյանքի ուսումնասիրության բնագավառում։ Մյուս կողմից, նրանք անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում լուսարանելու հիշյալ ծայրամասյին ամրոցի (որի կազմի մեջ է մտել, ամենայն հավանականությամբ, Թեյշերախնի) և ուրարտական պետության կենտրոնական իշխանություն միջև այն ժամանակ գոյություն ունեցող փոխադարձ կապերը։

Կարմիր-բլուրում հայտնաբերված սեպագիր աղյուսակների մեջ զգալի հետաքրքրություն է ներկայացնում բլրի հյուսիս-արևմտյան լանջին ընկած սենյակներից մեկում 1956 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված աղյուսակը, որը և մենք հրատարակում ենք Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտնականի և Կարմիր-բլուրի հնադրական արշավախմբի պետ պրոֆ. Բ. Բ. Պրոտորովսկու հանձնարարությամբ։


Սեպագիր աղյուսակը (10 × 6,5 սմ) պարունակում է 12 տողից բաղկացած տեքստ, գլանաձև կնիքի արտատպություն՝ վերացական թևավոր էականերով, որոնք կանգնած են կենաց ծառերի ափս, ինչպես նաև արձանադրություն՝ տվյալ փաստաթուղթը կազմող ուրարտական թագավորի անվան հիշատակությամբ (երեսի վրա) և կլոր կնիքի (նկ. 1) արտատպություն՝ թևավոր ձիու պատկերով (ներքին կողմի վրա)։

Աղյուսակի հակադարձ երեսի վրա, որը հիմնականում տուժած է, պահպանվել են պրագմի կողմից արված հիերոգլիֆիկ նշանների ճաշողուններ (նկ. 2)։

Չնայած տեքստի համառոտ լինելուն և հիմնականում նշանների պարզությամբ այնուամենայնիվ սեպագիր աղյուսակի վերջանությունը և հատկապես նրա բովանդակ-

¹ Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերված կավե սեպագիր աղյուսակներից ներկայումս հայտնի են վեց ամբողջական աղյուսակներ և հինգ բեկորներ՝ նրանցից մինչ այժմ հրատարակված են միայն հետևյալները. Յ. Մ. Дьякоков, Фрагменты клинописных табличек из раскопок 1946 г. на Кармир-блуре, «Эпигр. фика Востока» (այսուհետև՝ ЭВ), II, 1948, էջ 86 և շար., Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, II, Ереван, 1952, էջ 75-77, Н. В. Арутюнян, Новонайденная клинописная таблетка из раскопок Кармир-блуре, «Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1957, № 3, էջ 144-149։

² Kublini ընթերցումը առաջարկվել է Ի. Մ. Դյակոնովի կողմից։ Տե՛ս նրա «Земетки по урартской эпиграфике», ЭВ, IV, 1951, էջ 106, ծանոթ. 8. նույնը, ВДИ, 1956, № 2, էջ 74։




Սեպսդիր աղյուսակի ավտոգրաֆիան



Նկ. 1



Նկ. 2



Սեպագիր արշալուսակի լուսանկարը

կուծյան բացահայտումը ներկայացնում է զգալի դժվարություն: Այդ, առաջին հերթին, բացատրվում է նրանով, որ նման կարգի տնտեսական, վարչա-իրավական և այլ փաստաթղթերը, ինչպես և սույն աղյուսակը, ի տարբերություն վիճագիր արձանագրությունների, բնութագրվում են միանգամայն յուրահատուկ ոճական առանձնահատկություններով ու տերմինաբանությամբ, ինչպես նաև որոշ նշանագրերի ուրույն դժագրությամբ: Մյուս կողմից, հրատարակվող փաստաթուղթեր 9-12-րդ տոհմերի վերջում ունի ոչ այնքան զգալի, բայց իմաստի տեսակետից չափազանց կարևոր, տուժած մասեր և պարունակում է ուրարտագիտության մինչ այժմ անհայտ *kutur(a)*- բայը¹:

Ենեկով վերոհիշյալից, կարծում ենք, որ սեպագիր աղյուսակի ներքևում առաջագրվող գիտական տառադարձումը կարող է պարունակել վիճարանության ենթակա որոշ տեղերի Սույն աղյուսակի համար մենք առաջարկում ենք հետևյալ գիտական տառադարձումը, որը կաշխատենք ներքևում հնարավորին չափով հիմնավորել: Այնուհետև կտանք փաստաթղթի մեր թարգմանությունը:

Պատկերական տառադարձում

- 1) IDSar₅-du-ri-i-se
- 2) IQu-sa-a-h[i]-n[se]²
- 3) a-ru-ú-ni [ba]-[ú]-[še]³
- 4) Lúu-d[ti]⁴ >⁵ IŠa-ni-e]-d[i]
- 5) F[TIM-MES > UR] Ku-du-na
- 6) H-di(!)⁶ LúERUM-di(!) > ku-tu-ra-di(!)

¹ Այդ բայի թարգմանության առթիվ մեր դատողությունները տե՛ս ներքևում:

² Սույն տողի վերջին նշանները վերականգնել ենք *hi* և ու նշանների մնացորդների առկայության, ինչպես նաև վիճագիր արձանագրություններում շատ հաճախ հանդես եկող նման դարձվածքների համադրության հիման վրա: Տուժած տեղը, մեր կարծիքով, միանգամայն կարող է արդարացնել այդպիսի վերականգնումը:

³ Baus- բառը վերականգնել ենք u նշանի պահպանված հետքերի հիման վրա, ինչպես նաև Կարմիր-բլուրի 1949, 1955 և 1957 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերված սեպագիր աղյուսակների նման կարգի միատիպ դարձվածքների համադրությամբ: Հմտ., օրինակ, ... ba-u-še si-ú-ni [ti]-i-e... (1949 թ., տող 1-2), ու նշանը վերականգնված է մեր կողմից: Հմտ., այդ դարձվածքի ընթերցումը ի. Մ. Դյակոնովի մոտ—Б. Б. Пуотровский, Кармир-блур, II դրքում, էջ 75, ինչպես նաև Գ. Ա. Մելիքիշվիլու մոտ, ВДИ, 1953, № 4, էջ 248. ...b[a]-u-še [si-ú]-ni > [ti-i-e]... (1955 թ., տող 1-2, աղյուսակի ղեկին հրատարակված չէ): H-nu-us si-la-a-se > ba-ú-se si-ú-ni [ti-i-e]... (1957 թ., տող 1-2, աղյուսակը ղեկին հրատարակված չէ):

⁴ Հմտ., Արդիշտի II-ի Նադի գյուղում (Արճեշի մոտ) հայտնաբերված արձանագրության Iúu-di gi-ni բառի հետև Տե՛ս Դ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи (այսու հետև՝ УКН), № 276, հակադարձ երես, տող 3: Դժբախտաբար, այստեղ ևս պարզ չէ Luu-tiguni (> Luu-tiguni > Luu-tiguni կամ Luu-tiguni > Luu-tiguni) բառի իրատեղի: Արարտական արձանագրություններում հանդիպող g >] առաջարձման մասին տե՛ս Н. Б. Арутюнян, Хорхорская летопись Арминти I, царя Урарту (автореферат диссертации), М., 1951, էջ 16 և ծանոթ. 3: Դ. Ա. Меликишвили, УКН, ВДИ, 1953, № 1, էջ 239:

⁵ Բառերի միմյանցից անջատման նշանի արտահայտությունը (Հմտ. ներքևում՝ 5, 6, 7 և 8 տողերում) Այդ նշանը, որն իրենից ներկայացնում է երկու գլուխներ, թեք, զալաթներով գեղի աջ (ուղղությամբ գեղի ներքև), սեպագրերի մի ամբողջություն, հանդիպում է միմյանց կապի սեպագիր աղյուսակների (բայց ոչ վիճագիր արձանագրությունների) տեքստերում և կատարում է մի տեսակ կետագրության նշանի դեր, թեկուզ այն հանդես է գալիս ոչ միշտ և ոչ այնքան օրինալարներն:

⁶ Այս նշանի ընթերցումը որպես di կասկածի է, բանի որ այստեղ և 9-րդ տողում

I!di(!)-di-i-n >3e բառի մեջ) սովորական di-ի  փոխարեն տեղա է 

նշանը: Առաջին di-ում (H-di! կոմբինացիայում) գուցե թաքնված է նրա զալափարագրային նշանակություն՝ SH.IM ?) <լիարժեք, անփաստելի, ամբողջական>: Նման ղեպքում ակնարկվում է, ըստ երևույթին, երկու լիարժեք ստորուկների մասին: Սակայն բացառված չէ նաև այն հնարավորությունը, որ այդ և մյուս նույնական (LúERUM բառավերջի) նշանները դիտվեն որպես հորովական վերջավորություններ: Այդ տողի վերջին բառը հավանաբար հանդիսանում է անցյալ կատարյալ ժամանակի, առաջին ղեմքի, եղակի թվի անանցողիկ բայ (Kutur- բայահիմքից, անանցողիկ բայերի -3- ցուցիչով):

- 7) É-ni >> bi-di-i
 8) ¹Hu-er(?)¹-a-i >> ¹Ku-tu-bi-li-i¹
 9) ¹Ei(!)-di-i-ni-se LuBI · [LUL?]²
 10) ¹A-bi-li-a-ni-se LuZA', [DI'M · MA?]³
 11) NA₃pu-lu-si-ni-[li?]⁴
 12) 'L-al-di-tu-ù-[li?]⁵

Քաղի աղյուսակի վերահիշյալ տեքստից, արձանագրություն է պարունակում նաև գլանաձև կնիքի արտաստությունը, որի վրա բնթերցվում է՝ -ri ¹Ru-sa ¹DSar₅-du-ri-[...]⁶:

Անցնում ենք հրատարակվող փաստաթղթի մեկնարանությունը՝ ըստ առանձին տողերի:

¹ Այդ նշանի բերված ընթերցումը ակադեմիկոս Վ. Վ. Ստրուվեն համարում է ա-վելի ընդունելի, բայց սեպագիր աղյուսակի տեքստը, ինչպես նաև նրա լուսանկարը, կարծես թե ստեղծում են այնպիսի տպավորություն, թե երկու հորիզոնական զուգահեռ սեպագրերից (առաջին հորիզոնականից հետո) ներքևինը տրոհվում է, այսինքն՝ տվյալ

զեպրում զուցե առկա է ոչ թե  այլ  նշանը Հետևաբար, այդ

նշանի նմանորինակ բնկավման զեպրում այն, ըստ երևույթին, անհրաժեշտ է ընթերցել ka(?) կամ ka(?)⁷: Իսկ եթե այդպիսի տպավորությունը խարուսիկ է, ապա er նշանի սովորական գրության համեմատությամբ այստեղ նկատվող որոշ նահանջը, այսինքն՝ երկու հորիզոնական սեպագրերի երկու ուղղահայաց սեպագրերով հատվելու փաստը չի կարող հարուցել զարմանք. քանի որ սեպագիր աղյուսակների տեքստերում այս կամ այն նշանի գրության տարբերակները հանդիպում ենք և այլ տեղերում: Կարելի է համեմատել թերևս, -ri նշանի (NA₃pulusinili բառում) գրության ձևը հրատարակվող փաստաթղթի 11-րդ առդում:

² Վերականգնել ենք այդ նշանների պահպանված մասերի հիման վրա՝ ¹Տու-ժած սեզը, անկասկած, կարող է արդարացնել նմանորինակ վերականգնումը՝ Հիմա.

   նշանների կոմբինացիայի հետ, որն ընթերցվում է

Luša-a-ka ձևով: Տե՛ս A. Deimel, Sumerisches Lexikon, № 214 (98):

³ Վերականգնված է այդ կոմբինացիայի սկզբի պահպանված նշանների հիման վրա: Տուժած սեզը, ըստ երևույթին, հիմք է տալիս այդպիսի վերականգնման համար:

Հիմա.     : Տե՛ս A. Deimel, Sumerisches Lexikon,

№ 229 (25): Ի միջի այլոց, այդ կոմբինացիայի վերջին նշանը կարող է և բացակայել:

⁴ Վերականգնված [li?] նշանը հանդիսանում է NA₃pulusinī գոյական անվան հոգ-նակիի վերջավորությունը: Հնարավոր է նաև [i?] կամ [e?] վերականգնումը:

⁵ Մեզ թվում է, թե այստեղ տուժած է [li?] նշանը՝ 'ald(u)- անցողիկ բայի եր-րորդ գեմարի հոգնակի թիվ արտահայտող օբյեկտային ցուցիչը. սակայն NA₃pulusinī բառի վերջում [i?] կամ [e?] վերականգնման զեպրում անհրաժեշտ է այստեղ վերականգնել [ni?] -վերահիշյալ բայի երրորդ գեմարի եզակի թիվ արտահայտող օբյեկտային ցուցիչը:

⁶ Գլանաձև կնիքի արտաստության վրա եղած սեպագիր տեքստը, ամենայն հավանականությամբ, կրկնվում է: Դրանով էլ հենց պետք է բացատրել ri (¹DSarduri բառի վերջավորությունը) նշանի առկայությունը տեքստի սկզբում: Բայց կասկածանք է հարուցում ¹li/e կամ ¹i նշանի բացակայությունը թաղավորի հայրանվան վերջավորության մեջ, այն զեպրում, երբ ուրարտեերների գրության կանոնների համաձայն ավելի շուտ սպասելի էր (աղյուսակի տեքստի 1-2 տողերում հանդես եղող ¹DSardurise ¹Rusa₁inise ձևի կող-քին) ¹DSarduri(ni) ¹Rusa₁hi/e կամ թե ¹DSarduri(ni) ¹Rusa₁ ձևը, որը նշանակում է Սարգուրի, Ռուսայի որդի: Հիմա. Կարմիր-բլուրի 1955 թ. սեպագիր ուղյուսակի գլա-նաձև կնիքի արտաստության տեքստը և նման կարգի այլ արտահայտություններ՝ ուրար-տական վիմագիր արձանագրություններում:

Սեպագիր աղյուսակի առաջին տողը, առկա գրություն համաձայն, անհրաժեշտ է ընթերցել հետևյալ կերպ. IDSaṣ-ḫu-ri-i-se «(Թագավոր) Սարգուրի»։ Այստեղ հիշատակություն արժանի է, որ ասուրական թագավորների արձանագրություններից Սարգուրի անունով հայտնի են երեք ուրարտական թագավորներ, իսկ ուրարտական թագավորների արձանագրություններից՝ երկուսը՝ Թե նրանցից ո՞րն է հանդես գալիս սույն աղյուսակի տեքստում, այդ հարցին որոշակի պատասխան է տալիս հրատարակվող փաստաթղթի հենց երկրորդ տողը, որտեղ ընթերցվում է հիշյալ թագավորի հայրանունը՝ 1Ru-sa-a-[i-n]i-[se] «Ռուսայի որդի» (բառացիորեն «Ռուսայի, Ռուսայան»)։ Հետևաբար, աղյուսակի առաջին երկու տողերը բացահայտում են, որ այստեղ մենք գործ ունենք ուրարտական թագավոր Ռուսայի որդի Սարգուրիի, այսինքն՝ ուրարտական կառավարիչ Սարգուրի III-ի հետ։

Այստեղ հիշատակության արժանի է այն կարևոր փաստը, որ ուրարտական թագավոր Սարգուրի III-ի մասին մինչև այժմ մենք դատկերացում ենք ունեցել սոսկ ասսուրական արձանագրությունների մատուցած տվյալների համաձայն, այսինքն՝ Աշշուրբանապալ թագավորի (668-633(?) թթ. մ.թ.ա.)² թողած զրավոր աղբյուրների հիման վրա։ Հետևաբար, հրատարակվող սեպագիր աղյուսակը հետաքրքրաշարժ է ամենից առաջ այն տեսակետից, որ նրա միջոցով առաջին անգամ ուրարտական զրավոր աղբյուրները հիշատակում են ուրարտական թագավոր Սարգուրի III-ի անունը, որը և հանդիսացել է Թեյշեբարինին (Կարմիր-բլուր) հիմնադրողի՝ Ռուսա I-ի որդին։

Այժմ տեսնենք, թե ասսուրական սեպագիր աղբյուրները ինչպիսի տեղեկություններ են մատուցում ուրարտական Սարգուրի III թագավորի մասին։ Նշենք, որ մինչև սույն սեպագիր աղյուսակի հայտնաբերումը, ուրարտական հիշյալ թագավորի մասին տեղեկություններ ենք ունեցել սոսկ ասսուրական Աշշուրբանապալ թագավորի երկու արձանագրություններից (ասսուրական աղբյուրներում նա հանդես է գալիս Իշտարգուրի անվամբ)³, որոնցից մեկում նա գրում է․

«...Իշտարգուրին, Ուրարտուի թագավորը, որի նախնի թագավորները թագավորներն էին՝ իմ նախնիներին միշտ «եղբայր» էին անվանում, — իսկ այժմ Իշտարգուրին լսելով իմ ուժի և արարողությունների մասին, որոնք ինձ վիճակել են ղեկավարել աստվածները, — ինչպես որդին է իր հորը մշտական անվանում «տեր», այնպես էլ նա, զրա համաձայն, սկսեց մշտական գրել «Թագավորին՝ իմ տիրոջը»։ Հարգալից, խոհեմությամբ նա բերում է այստեղ իր ծանրադույն ընծաները»⁴։

Իր մի այլ արձանագրության մեջ, որը հանդիսանում է նաևակ՝ ուղղված Սարգուրի III-ին, Աշշուրբանապալը գրում է․

«[Աշշուրբանապալի], [Ասսուրեհատանի թագավորի նամակը] Ուրարտուի թագավորին՝ իր որդուն։ Ամբողջ Ասսուրեհատանը [ողջ և առողջ է]․ [քեզ], քո արքունիքին և քո երկրին [թող խաղաղություն լինի]։ Այն ժամանակվանից ի վեր, երբ աստված թագավորական իշխանությունը՝ տվեց քեզ, [...] գուցե [ք]արեկամ ես որոնում։ [...], [այնպես որ?] ես ուրախացա [...], իսկ բարեկամը [...]»⁵։

Հիշատակության արժանի է այն փաստը, որ պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին, Կարմիր-բլուրի պեղումներից ի հայտ բերված հնագիտական նյութի հիման վրա, միանգամայն

¹ Ուրարտական թագավոր Սարգուրի I-ի արձանագրությունները կազմվել են ասսուրերեն լեզվով։ Տե՛ս Գ. Ա. Меликнишвили, УКН, № 1-3.

² Տե՛ս Ի. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВВИУ), § 72, ВДИ, 1951, № 3, էջ 236։

³ Սյուպիսի ընթերցումը միանգամայն օրինաչափ է նաև ուրարտական աղբյուրների համաձայն, քանի որ այդ անվան սկզբի նշանը (զաղափարադրելը) Saṣ, D «աստված» որոշիչի (զետերմինատիվի) հետ միասին, հենց կարելի է ընթերցել «(աստված) Իշտար»։

⁴ Աշշուրբանապալի այսպես կոչված «Ռասսամի գլանի» վրա եղած արձանագրություններից։ Տե՛ս Ի. М. Дьяконов, АВВИУ, § 72 (X, 40—50). ВДИ, 1951, № 3, էջ 237։ Այդ արձանագրությունը ժամանակագրված է Շամաշդանինանինի (ոչ վաղ, քան 638 թ. մ. թ. ա.) էպոնիմատով։ Նույն տեղում, էջ 236։

⁵ Տե՛ս Ի. М. Дьяконов, АВВИУ, § 79. ВДИ, 1951, № 3, էջ 243-244։

համադեցուցիչ ձևով ցույց է տվել¹ (իսկ հետագայում նրա այդ կարծիքը դրավոր աղբյուրների մասուցած ավյալներով հաստատել է Ի. Մ. Դյակոնովը)², որ Թեյեբրաինի քաղաք-ամրոցը վերաբերում է ոչ միայն նրա հիմնադրողի՝ Ռուսա Ու-ի (685-645 թթ. մ. թ.ա.)³ թագավորության ժամանակաշրջանին, այլև նրա գոյությունը շարունակվել է մինչև ուրարտական պետության անկումը ընդհանրապես։ Սույն սեղագիրը աղյուսակը, որ հայտնաբերվել է Թեյեբրաինիում, ավելորդ անգամ հաստատում է վերոհիշյալ հեղինակների կարծիքը և ընդլայնում մեր գիտելիքները ուրարտական պետության, այժմ Սոփե-տական հայաստանի տերիտորիալ կազմը մտնող այդ վարչատնտեսական կենտրոնի ժամանակագրական շրջանակների վերաբերյալ։ Հետևաբար, կյանքը Թեյեբրաինիում, ինչպես վկայում է հրատարակվող փաստաթուղթը, շարունակվել է և հետագայում, այսինքն՝ Ռուսա Ու-ի հաջորդների, համենայն զեպս նրա որդի Սարգուրի Ու-ի, ժամանակ⁴։

Աղյուսակի 3-րդ տողը մեր կարծիքով կարելի է վերծանել հետևյալ կերպ. a-ru-ú-ni [ba]-[ú-sé]⁵։ Այստեղ մենք գործ ունենք անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի երրորդ գեմարի a(ru)- «տալ, նվիրել, մատուցել» անցողիկ բայի և baúse «խոսք, հրաման, իր, առարկա» գոյական անվան հետ։ Նրանցից a(ru)- բայը ուրարտական վիճագիր աղբյուրներում (ՄԿՈ, 28, վերին կող. տող 15, երեսի կող. տող 10, 34, տող 3, 36, տող 16, 155 E, տող 54, F, տող 28 և այլն), այդ թվում կելյաշինի և Թոփուզավայի երկվիզյան արձանագրություններում (ՄԿՈ, 19, ուրարտ. տեքստ, տող 12—աստուր. տեքստ, տող 11, 264, ուրարտ. տեքստ, տող 16, 22, 27, 30—աստուր. տեքստ, տող 15, 21, 27, 28) հանդես է գալիս շատ հաճախ և համապատասխանում է ասսուրերեն nadanu «տալ» բային։ Նույնը կարելի է ասել նաև baúse գոյական անվան մասին, որը բավական հաճախ հանդես է գալիս ինչպես ուրարտական վիճագիր հուշարձաններում (ՄԿՈ, 97, տող 5, 127 H, տող 32, 128 A2, տող 13, A3, տող 17, 136, տող 6, 155 C, տող 30 և այլն), այնպես էլ կելյաշինի և Թոփուզավայի ուրարտա ասսուրական երկվիզյան արձանագրություններում (ՄԿՈ, 19, ուրարտ. տեքստ, տող 21—աստուր. տեքստ, տող 18, 264, ուրարտ. տեքստ, տող 6, 17—աստուր. տեքստ, տող 6, 16) և համապատասխանում է ասսուրերեն ama-lu «խոսք, իր, առարկա» բառին։ Հետևաբար, աղյուսակի երրորդ տողը a-ru-ú-ni [ba]-[ú-sé] ինչպես «(նա) տվեց հրաման», այսինքն՝ այստեղ ակնարկվում է այն հրամանի մասին, որ տվել է աղյուսակի առաջին երկու տողերում հիշատակված Ռուսայի որդի Սարգուրի թագավորի կողմից։

Աղյուսակի 4-րդ տողը հետաքրքիր է այն իմաստով, որ նրանում հանդես է գալիս Թագավորի վերահիշյալ հրամանը իր վրա կրող անձը։ Այս տողը, ինչպես այն գրված է,

¹ Տե՛ս Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, I, Ереван, 1950, էջ 86 և հա.։

² Տե՛ս Ի. Մ. Дьяконов, Последние годы урартского государства по ассирио-вавилонским источникам, ВДИ, 1951, № 2, էջ 29 և հա.։

³ Տե՛ս Բ. Բ. Пиотровский, История и культура Урарту, էջ 36. Դ. А. Меликишвили, ՄԿՈ, ВДИ, 1954, № 1 էջ 248։

⁴ Որպես Սարգուրի Ու-ի իշխելու ժամանակաշրջան, Բ. Բ. Պիոտրովսկին ընդունում է 645-625 թթ. մ. թ.ա.։ Տե՛ս նրա վերոհիշյալ աշխատությունը, էջ 38։ Գ. Ա. Մելիքիշվիլին, Ի. Մ. Դյակոնովի կարծիքի (ВДИ, 1951, № 2, էջ 29-39) հիման վրա, հակված է որոշ չափով ետ տանելու ուրարտական պետության անկման թիվը, հետևաբար և նրա վերջին թագավորների իշխելու տարեթվերը։ Որպես Սարգուրի Ու-ի հոր, այսինքն՝ Ռուսա Ու-ի թագավորության եզրափակիչ թվական, նա (ինչպես և այլ հետազոտողներ) պայմանականորեն ընդունում է 645 թ. (?)։ Եվ եթե կարելի լինի համարել, թե Սարգուրի Ու-ը իսկապես հանդիսացել է էրիմենա թագավորի հայրը, որի թագավորության սկիզբը, նույնպես պայմանական, նա ընդունում է 635 թ. մ. թ.ա., ապա Սարգուրի Ու-ը, Գ. Ա. Մելիքիշվիլու կարծիքով, իշխել է մոտավորապես 645-635 թթ. (?) մ. թ.ա.։ Տե՛ս ВДИ, 1954, № 1, էջ 233, 248։

⁵ Աղյուսակի և նրա լուսանկարի վրա բավականաչափ հստակ նկատելի են այդ նշանի հետքերը։

⁶ baúse բառի վերականգնման մասին տե՛ս նրան վերաբերող ծանոթագրությունը աղյուսակի զիտական տառագարձման բաժնում։

մեր կարծիքով անհրաժեշտ է վերծանել հետևյալ կերպ. Lúá'-c'/tin² ≈ Lúá'-ni-e]-d[i]³, այսինքն՝ «ուզին(?) Շանեղուն» ar(u)- բայը ուրարտական գրավոր աղբյուրներում պահանջում է տրական հոլովի օրյեկտ.⁴ սովյալ ղեպքում di նշանը (Lúáni անվան վերջում) հավանաբար կատարում է տրական հոլովի գեր:

Կալե սեպագիր աղյուսակի 5-րդ տողից սկսվում է օրյեկանների թվարկումը, որոնք Սարգուրի III թագավորի վերահիշյալ հրամանի համաձայն ընկել են այն անձի (զուցե հիշյալ Շանիի) գործողության ոլորտի մեջ, որին բախտ է Վիճակվել կատարելու այդ կարգադրությունը: Աղյուսակի 5-րդ տողը վերծանվում է հետևյալ կերպ. KITIM.MIS URUKU-du-na: Այդ տողի առաջին նշանների կոմպլեքսը ներկայացնում է աստուրական ER-ITU «հոգ» գաղափարադիրը՝ TIM հնչյունական լրացմամբ, այսինքն՝ ERSITIMTIM և հոգնակի թվի ME< ցուցիչով: Այնուհետև առկա է բառանջատման նշան և ապա Կուզունա գրությունը մի քաղաքանուն: Գուցե այդ քաղաքի անունը սովյալ ղեպքում հանդես է գալիս հոգնակի թվի տեղական հոլովով, որի մասին ակնարկում է -a վերջավորությունը: այդ ղեպքում քաղաքանվան ուղիղ ձևը պետք է լինի ոչ թե Կուզունա, այլ Կուզունիլի: Նման մեկնաբանման ղեպքում այդ տողն ամբողջությունում վերցված կարելի է թարգմանել՝ «(այն) հոգերը (որոնք գտնվում էին) Կուզունիլի քաղաքում»: Հնարավոր է, որ այստեղ նկատի են առնվում հիշյալ քաղաքի ոչ թե բոլոր հոգային տարածությունները, այլ նրանց մի մասը միայն, բայց որոնց մասին ինչպես հրաման արձակողը, այնպես էլ նրա գատարողը ունեն որոշակի պատկերացում:

Սեպագիր աղյուսակի հաջորդ՝ 6-րդ տողը սկսվում է «երկու» թվանշանով և ապա առկա է ինչ-որ կասկածելի նշան, որը մենք որոշ վերապահություններ նույնացնում ենք di նշանի հետ: Հաջորդում է, այնուհետև, LU «մարդ» որոշիչը և EkUM «ստրուկ» գաղափարադիրը, որը վերջում ունի վերհում հենց նոր հիշատակված di նշանին նման գրություն: Արդեն նկարագրված նշաններից հետո, այդ տողում առկա է բառանջատման նշանը և այնուհետև Ku-tu-ra-di(!) բառը, որը, մեր կարծիքով, պետք է որ լինի անցյալ կատարյալ ժամանակի, հոգնակի թվի, առաջին դեմքի kutur(a)- անանցողիկ բայը: Այս բայը ուրարտական գրավոր աղբյուրներում հանդես է գալիս սոսկ առաջին անգամ, բայց որում հրապարակվող աղյուսակի տեքստը հաղիվ թե լիարժեք հնարավորություններ ընձևող վերջնականորեն հաստատելու նրա իմաստը: di(!) նշանը («երկու» թվանշանից հետո) անհրաժեշտ է, ըստ երևույթին, ընկալել նրա վանկադրային նշանակությունը և զիտել իր-րե «երկու» քանակական թվական անվանը վերաբերող հոլովական վերջավորություն⁵ մուլն տողի «երկու» թվական և LuEKUM «ստրուկ» գոյական անունները, հիշյալ մեկնաբանման ղեպքում, համաձայնեցված են հոլովներով (II-di(!) LuERUM-di!):

¹ Այս նշանը բայ իր գծադրության որոշ չափով տարբերվում է ն նշանի գրության մյուս ձևերից (հմմտ. թեքստ և նշանի հետ սույն աղյուսակի 3-րդ և 12-րդ տողերում), որտեղ հորիզոնական սեպագրերի ծայրերը զգալի չափով զուրս են գալիս ուղղահայաց սեպագրերից հետո: Բայց նա նման չէ և E նշանին (հմմտ. 7-րդ տողի սկզբում), ըստ որում այդպիսի ընթերցման ղեպքում նա ոչ մի իմաստ չի տալիս: Գրագիրը սովյալ ղեպքում, ըստ երևույթին, հակում է ունեցել անտեսելու գրելու տեղը՝ այդ տողը հիշյալ և հաջորդ նշանները տեղավորելու նպատակով:

² Այս բառը, ամենայն հավանականությամբ, նշանակում է զրադունքի որևէ տեսակ (տե՛ս նրան վերաբերող ծանոթագրությունը աղյուսակի զիտական տառագրածման բաժնում):

³ Հնարավոր է, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թե անձնանվան, այլ ցեղանվան հետ, կամ թե զուցե նրանք սովյալ ղեպքում համընկնում են: Վերջին di նշանը հավանաբար հանդիսանում է ուղեկորական հոլովաձևի ցուցիչը՝ տրական հոլովի իմաստային առումով:

⁴ Հմմտ... aruni ^DAldie eurie... (YKH, 19, ուրարտ. տեքստ, տող 12) կամ ...arubi ^Luradinaue... (YKH, 29, երեսի կողմ, տող 10):

⁵ Տրական և ուղեկորական հոլովաձևերը ուրարտերենում հաճախ հնչյունափոխվում են, այսինքն՝ փոխարինում են միմյանց: Հմմտ... օրինակ, ^DHaldie eurie (YKH, 145, տող 2, 146, տող 1 և այլն) և ^DHaldiedi EN-di (YKH, 127, III, տող 26, IV, տող 25 և այլն):

⁶ SE'ս նաև աղյուսակի զիտական տառագրածմանը վերաբերող համապատասխան ծանոթագրությունները:

di (!) նշանը հանդիսանում է ուղեորական հոլովի վերջավորությունը, սակայն տվյալ դեպքում նա, հավանաբար, կատարում է արական հոլովի դեր (հմտ. I an րառավերջի -edi վերջավորությունը՝ չորրորդ աղոում): Եվ այսպես, աղյուսակի վեցերորդ տողը, ամբողջությամբ վերցված, նպատակահարմար ենք դանում վերծանելու հետևյալ կերպ. II-di(!) LóERUM-di(!) >> ku-tu-ra-di(!): Միանգամայն ակնառու է, որ այստեղ մենք զործ ունենք երկու ստորակներ¹ և kutur(a)- բայի հետ, ըստ որում վերջինս, ըստ երևույթին, վերաբերում է հաջորդ տողի E զաղափարադրին (որն ունի նաև -ni հոլովական վերջավորությունը), քանի որ հիշյալ բայը II-di(!) LóERUM-di(!) արտահայտություններից բաժանված է այսպես կոչված բառանջատման նշանով: Աղյուսակի 5-7-րդ տողերի իմաստի ընկալումը, ինչպես մեզ թվում է, որոշակի կախում ունի kutur(a)- բայի իմաստի պարզարանումից: Մեզ թվում է նաև, որ այդ բայը, շատ թե քիչ հավանականություն սահմաններում, կարելի է համեմատել հայերեն «կոտոր» kotor «կտոր, մաս» բառի (զոյական անվան) հետ, որից և սերում է «կոտորել» kotor-el բայը՝ «կտրել, անջատել, բաժանել մասերի, ոչնչացնել, սպանել» և այլ նման իմաստային առումներով: Այս կապակցությամբ միանգամայն հետաքրքրաշարժ է, որ հայերեն «կոտոր» kotor բառը հայերենի և ընդհանրապես հնդեվրոպական լեզուների խոշորագույն զիտակների կարծիքով բացակայում է հնդեվրոպական լեզուներին առանձնահատուկ արմատների ընդհանուր շարքում²: Եթե այդպես է, ապա հետադրույթը դուրս է իրավունք ունի այն որոնելու հենց ուրարտեանի բառային ֆոնդում: Այդ դեպքում, բնականաբար, մենք հակված ենք կարծելու, որ այդ բառը հայերենում, ըստ երևույթին, պետք է գիտել որպես փոխառություն, ըստ որում՝ փոխառություն հենց ուրարտեանից:

Ինչ վերաբերում է աղյուսակի յոթերորդ տողի E-ni կոմբինացիային, ապա մեզ թվում է, որ հազիվ թե այն հնարավոր լինի գիտելու իբրև E «տուն» զաղափարադրի ուղղակի իմաստով՝ -ni հնչյունական լրացմամբ E «տուն» զաղափարադրի մեկնարանման շուրջը Ի. Մ. Դյակոնովը իր աշխատություններից մեկում բերում է միանգամայն հետաքրքիր տվյալներ, որոնք, մեր կարծիքով, հնարավորություններ են ընձեռում հշտելու նաև սույն աղյուսակի E զաղափարադրի իմաստը: Այսպես, օրինակ, Պարթև մարզի երկրագործ բնակչության մասին³ պատմող արձանագրային բեկորներից մեկում ասվում է. «4000 (որթ) Սարուզ րաղաքում. ընդամենը 4000 որթ, 1 այգի շամի Պարթև քաղաքի շրջանի: Ընդամենը 1000 <բացրողում> է Ոչխարի 1 հովիվ... Այս ամբողջը հանդիսանում է տունը Սին-էրեշի՝ հացագործի, որին բնակեցրել էր Աղադրիմանին՝ Պարթև քաղաքի հացագործների պետը»: Հիշյալ տեսակետից նվազ հետաքրքրություն չի ներկայացնում նաև այդ կարգի մի այլ փաստաթուղթ, որը պատմում է, թե «Դաշտերը, այգիները և մարզկանց, որոնց իմ հովանու տակ նա ձեռք բերեց և զարմեց իր սեփական տունը—ևս աղատեցի, զբանցեցի, կնքեցի իմ արքայական կնքամատանիով և հանձնեցի Նարուշար-րուսուրուզ զորապետին՝ իմ թագավորությունը պաշտոնին»⁴:

Վերահիշյալ փաստերը Ի. Մ. Դյակոնովին բերում են այն համոզման, որ «Տուն» տերմինը, որով արտահայտված է հացագործ Սին-էրեշի կալվածքը, հիշեցնում է նման կարգի բառադարձությունը անձեռնմխելի հրովարտականքում և ստիպում է կոահելու, որ տվյալ դեպքում պատմվում է այդ անձի սեփականության մասին⁵: Այս բոլորը մեզ

¹ Այդ ստորակները դուրս են ամրացված են եղել աղյուսակի 5-րդ տողում հիշատակված հողերին և սխտեմատիկարար զրազվել են նրանց մշակմամբ:

² «Կոտորել» բայը զրաբարում ունի հետևյալ իմաստները՝ 1. կտրել, կտրատել, կտրել, ցարդել. 2. կտոր-կտոր անել, բաժանել: Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, էջ 585:

³ Տե՛ս «Կոտոր» բառը Հր. Ահապյանի «Արմատական բառարան»-ում. «Կոտոր»-ը կապակցում էլ՝ հանդիսանում է անորոշ դերբայի վերջավորությունը:

⁴ Պարթևների ցուցակների կազմելը Ի. Մ. Դյակոնովը վերագրում է Աշշուրականալի՝ զեպի Գամբուլցիների երկիրը ձեռնարկած արշավանքին անմիջապես հաջորդած մասնակիցին (655 թ. մ.թ.ա.), որին ուղեկցել է տեղի բնակչության զաղթը: Տե՛ս նրա «Развитие земельных отношений в Ассирии», Ленинград, 1949, էջ 90, ծանոթ. 5:

⁵ Նույն տեղում, էջ 93, № 3 (III, 1):

⁶ Աշշուրականալի նոր-ասսուրական շրջանի անձեռնմխելի հրովարտակից: Տե՛ս նույն տեղում, էջ 128 (IV):

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 102 և ծանոթ. 7, 8:

ստիպում են մտածելու, որ մեր աղյուսակի E-ni զաղափարադիրը (հոլովական վերջավորությունն հետ միասին) ևս անհրաժեշտ է բնկալել «սեփականություն», հող, դաշտ, հողամաս, կավածք, ունեցվածք» և այլ նման իմաստներով: Այդ կոմբինացիայի վերջին նշանը, ըստ երևույթին, հանդիսանում է բացառական հոլովի ցուցիչը:

Հետևաբար, kutur(a)- բայի և E-ni զաղափարադրի ու հոլովական վերջավորությունն նմանօրինակ մեկնաբանման դեպքում մենք հակված ենք սույն աղյուսակի 5-7-րդ տողերին տալու մոտավորապես հետևյալ բովանդակությունը: «(այն) հողերը, (որոնք գտնվում էին) Կուզունիլի քաղաքում, երկու ստրուկներին հետ միասին¹, ես-անջատեցի (?)»² հողամասից»³: E-ni, ըստ երևույթին, նշանակում է որոշակի հողամաս (զուգահեռ Կուզունիլի քաղաքի հողային տարածությունը մոտավորապես վերցված), որից անջատվել են աղյուսակի հինգերորդ տողում հիշատակված հողերը: Սույն փաստաթղթի առաջին յոթ տողերի նման մեկնաբանման դեպքում անհասկանալի է մնում ar(u)- և kutur(a)- բայերի զեմքերի անհամապատասխանությունը այսինքն՝ նրանցից առաջինը հանդես է գալիս երրորդ զեմքով, այն դեպքում, երբ երկրորդը՝ առաջինի զեմքով: Այստեղ ուշադրություն արժանի է նաև աղյուսակի տասներկուերորդ տողի՝ al3(u)- բայը, որը, ar(u)- բայի նման (սակայն ի տարբերություն kutur(a)- բայի), հանդես է գալիս երրորդ զեմքով: Գուցե kutur(a)- բայը ակնարկում է թագավորի նախկին զործողությունները, որոնք կապված են եղել վերահիշյալ հողերը արդեն ակնարկված հողամասից անջատելու հետ, այսինքն՝ նա թագավորը՝ Նանին՝ այդ կարգադրությունը կատարողին, հիշեցնում է, թե նման կարգի փոփոխությունները պետք է ի կատար ածվեն ըստ իր (Սարգուրի III թագավորի) վաղ-օրոք կազմած պլանի⁴: kutur(a)- բայի նմանօրինակ ընկալման դեպքում, սույն փաստաթղթի 6-7-րդ տողերի ku-(u-ra-di(!) E-ni արտահայտությունը անհրաժեշտ է թարգմանել «(ինչպես) ես-անջատեցի (?) հողամասից» կամ «(որոնք) ես-անջատեցի (?) հողամասից»:

Սեպագիր աղյուսակի յոթերորդ տողում, վերահիշյալ E-ni կոմբինացիայից հետո, առկա է բասանջատման նշան և ապա bidi (bi-di-i) բառը: bid- հիմքից ուրարտական վիճադրերում հայտնի են՝ bid(u)- անցողիկ և bid(ia)- անանցողիկ բայերը, ինչպես նաև bi/edi/e, bi/edini և bidui, se բառերը: bid(ia)- անանցողիկ բայը պրոֆ. Մ. Ծերեթելին և պրոֆ. Գ. Ա. Մելիքիշվիլին թարգմանում են «շրջվել, շուռ գալ», իսկ biduiaše բառը պրոֆ. Մ. Ծերեթելին, պրոֆ. Յ. Ֆրիդրիխը և ուրիշներ ըստ իմաստի նույնացնում են

¹ Ըստ տեքստի ավելի շուտ պետք է լինի «երկու ստրուկներին»:

² kutur(a)- բայը հանդիսանում է անանցողիկ բայ, այն դեպքում, երբ մեր կողմից նրան տրված «բաժանել(?) անջատել(?)», տրոհել(?)» և այլն նշանակությունները ունեն անցողիկ իմաստ, այդ պատճառով էլ մեզ թվում է, թե այն բառացիորեն, ըստ երևույթին, պետք է նշանակի «անջատվել են (իմ կողմից)», «բաժանվել են (իմ կողմից)» և այլն: Այս կապակցությամբ, ուշադրություն արժանի է ուրարտերեն սեպագիր լեզվին առանձնահատուկ այն փաստը, որ նրանում ոչ այնքան հաճախ հանդիպում են ձևով անցողիկ և անանցողիկ բայեր, որոնք կազմված են միևնույն արմատներից (հիմքերից): Հիմա, օրինակ՝ si(u)- և s.(a)-, bid(u)- և bid(ia)-, kut(u)- և kut(ea)-, ul(u)- և ul(a)-, ust(u)- և us.(a)- և այլն:

³ Բառացիորեն՝ «տանից (տնից)»:

⁴ Սակայն մեզ թվում է, որ բացառված չէ թերևս այն հնարավորությունը, թե տվյալ փաստաթղթում պատմողը հանդիսանում է հենց Նանին, որը ակնարկում է, թե Սարգուրի III-ի հրամանի համաձայն ինքը կատարել է (կամ պարտավոր էր կատարելու) ուրարտական այդ թագավորի կարգադրության առաջին մասը (այսինքն՝ ինչ-որ հողերի անջատումը, ըստ երևույթին Կուզունիլի քաղաքի հողային տարածությունից, և նրանց վերադարձնելը Կուզունիլի ցեղի խուերա(?) կառավարչին), այն դեպքում, երբ տարբեր դրադու-նքների տեղի հիշումը և Արիլիանի ցեղերի ներկայացուցիչները՝ կարգադրության երկրորդ մասը (այսինքն՝ քարակոթողների կամ սահմանաքարերի հաղթահարումը՝ կապված նրանց տեղափոխման կամ տեղադրման հետ, այս մասին մանրամասն տե՛ս ներքևում):

⁵ Sb'u M. Tseretheli, Die Neuen haldischen Inschriften König Sardurs von Urartu, Heidelberg, 1923, էջ 59. Г. А. Меликишвили, УХН, ВДИ, 1954, № 1, էջ 201:

աստուրերեն *ina tajarti* «վերադարձին, վերադարձի ժամանակ» բառի կամ բառակապակցության հետ: Ըստ որում մեզ հետաքրքրող *bi/edi/e* բառին պրոֆ. Գ. Ա. Մելիքիշվիլին տալիս է հետևյալ իմաստը. «վերադարձած(?)», «վերադարձված(?)», «հակադարձ(?)», «հոդմ(?)», և այլն: Սակայն հաշվի առնելով այն հանդամանքը, որ հրատարակվող փաստաթուղթը հանդիսանում է վարչա-իրավական բնույթի թագավորական հրաման, մենք հակված ենք սույն աղյուսակի *bidi* բառը ավելի շուտ համարելու *bidi* բայի հրամայական ձևը՝ «վերադարձրո՛ւ(?)» իմաստով, այսինքն՝ այստեղ, ըստ երևույթին, պատմվում է այն հոգերի վերադարձվելու մասին, որոնք թագավորական հրամանի համաձայն պետք է անջատվեին, ըստ երևույթին, Կուդուների քաղաքի, հողային տարածությունից, և հանձնը-ղեին Կուտուրիլի ցեղի ոմն Քուերա(?) կառավարչին: Այդ ղեկավարում աղյուսակի 8-րդ սյուղի *Hu-er(?)*-a-i > ¹Ku-tu-bi-li-i արասհայտությունը անհրաժեշտ է ընկալել արական հոլովով, այսինքն՝ «Կուտուրիլի ցեղի Քուերա(?) կառավարչին»:

Սույն աղյուսակի 9-րդ սյուղի համար մենք առաջարկում ենք հետևյալ ընթերցումը՝

մը՝ ¹Di(i)-di-i-ni-se¹ LuBI-[LUL?]⁵: Եվ եթե այստեղ  նշանը իսկապես հան-

դիսանում է *di* նշանի գրություն այլատեսակը (տարբերակը), ապա ավելի ղեկավարում մենք գործ ունենք «ցիդինեցի» (Դիդինի ցեղանունից) վերացական դոյական անվան հետ: Դիդինի ցեղի երկրանունը, առաջին *di* նշանի որոշ տուժամամբ, հանդես է գալիս նաև Արգիշտի 1-ի Քուքիսթրյան տարեգրության կրկնադրերից (գուրլիկատ) մեկում, որը հայտնաբերվել է Վանի Սուրբ-Սահակ եկեղեցում: Դիդինի տեղանունը այստեղ հիշատակվում է Իխանի, Քուշանի և Դիաուխի տեղանունների հետ միասին: Եվ եթե աղյուսակի 9-րդ սյուղում մեր ¹Di(i)-di-i-ni-se ընթերցումը կարող է համապատասխանել իրականությունը, ապա կարծում ենք, որ իրավունք ունենք կոսահելու, թե այստեղ, ըստ երևույթին, առկա է ինչ-որ գրադմունքի տեր անձ (որի մասին վկայում է նաև գրադմունքին վերաբերող որոշիչը՝ այդ սյուղի հաջորդ նշանաթմբի սկզբում), որը Դիդինի ցեղի երկրից է, այսինքն՝ մի երկրից, որի տերիտորիան, ըստ երևույթին, ընկած է Եգիպտոսի, Քուշանի և Դիաուխի երկրների տերիտորիայի սահմանների շրջանում:

¹ *St'ua M. Tseretheli*, նշվ. աշխ., էջ 48. J. Friedrich, Einführung ins Urartäische, Leipzig, 1933, էջ 38-39. Գ. Ա. Меликишвили, УХН, ВДИ, 1954, № 1, էջ 201:

² *St'ua G. A. Меликишвили*, УХН, ВДИ, 1954, № 1, էջ 201:

³ Դիվար է ընդհանրապես դատել, թե այս երկու անունները ցեղանուններ են արդյոք, թե՛ անձնանուններ, քանի որ ուրարտեների գրություն կանոնների համաձայն բացառված չէ թե մեկ, և թե մյուս հնարավորությունը:

⁴ *se* վերջավորությունը այստեղ և ներքևում (¹Abiliani տեղանվան կամ ցեղանվան վերջում) հանդիսանում է վերացական դոյականի վերջավորություն (հմտ. KURZabab_hae-s-i «գարախայեցիներ», այսինքն՝ Ջարախա երկրի բնակիչներ):

⁵ Վերականգնել ենք Լևորոշիչի և *bi* նշանի առկայության հիման վրա: *St'ua* № 214 (98) նշանը Ա. Դեյմելի մոտ: Այն ընթերցվում է ¹uš. a-ka ձևով:

⁶ Այդ նշանը վերականգնված է Գ. Ա. Մելիքիշվիլու կողմից (УХН, 1958 В 1, սյուղ 2) Լեհմանն-Հաուպտի ClCh աշխատության մեջ գետնիցված մի արձանագրության լուսանկարի հիման վրա (տե՛ս աղյուսակ XXVI, լուսանկար 112 В 1, սյուղ 2). Եթե այդ վերականգնումը ճշմարտացի է, և եթե *di(?)* նշանի մեր ընթերցումը հրատարակվող աղյուսակում կարող է համոզեցուցիչ լինել, ապա մեզ թվում է, որ անհրաժեշտություն է զգացվում որոշ ուղղում մտցնելու Գ. Ա. Մելիքիշվիլու ընթերցման մեջ, այսինքն՝ այստեղ ևս [KURD]i(?)₁-di-ni-e բնութագրման փոխարեն դույց անհրաժեշտ է առաջարկել [D]i(?)₁-di-ni-e ընթերցումը, թեկուզ ուրարտական վիճակների կանոնների համաձայն երկու վերականգնումներն էլ կարող են հավասար չափով համոզեցուցիչ լինել (հմտա. 1Abiliani_h և KURAbiliani_h, 1Eria_h և KUREria_h և այլն):

⁷ Հիշյալ երկրների տեղադրման մասին տե՛ս Գ. Ա. Меликишвили, Диавхи, ВДИ, 1950, № 4, էջ 26-42: Ն. Վ. Հարությունյան, *Huṣini* երկրի տեղադրման հարցի շուրջ, Հայկական ՍՍՏ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 6, էջ 117-122. Н. В. Арутюнян, Заметки по урартской эниграфике, նույն տեղում, 1957, № 12, էջ 66-68:

ԱՍ որոշիչի և տնտեսական bi նշանի առկայությունը՝ աղյուսակի 9-րդ առդի վերջում (տե՛ս սույն փաստաթղթի լուսանկարային և ձեռագիր-ավտոգրաֆիկ պատճենները) մեզ հանգեցնում է այն մտքին, որ տվյալ գեպրում, բոտ երևույթին, մենք զործ ունենք ԼՃԼ [LUL?] նշանների կոմբինացիայի հետ, որը նշանակում է ինչ-որ բարձրաստիճան տնձ՝ «ծառայող, աստիճանավոր (շինություն)» և այլն: Հետևաբար, աղյուսակի 9-րդ առդում հիշատակվում է «շինություն» պաշտոնական անձը, որը Գիդինի ցեղի երկրի բնակիչ է: Եվ առաջին, աղյուսակի ամբողջ 9-րդ տողը մենք հակված ենք բնկալելու որպես «գիդինցի աստիճանավոր (շինություն)»:

Հրատարակվող փաստաթղթի 10-րդ տողում ընթերցում ենք 1A-bi-li-a ni se և այնուհետև ԱՍ որոշիչը ու տնտեսական չափով տուժած ZA₂ (NA₄) զազափարադիրը: Նկատի առնելով նշանների այդ կոմբինացիայի պահպանված սկզբնամասի առաջի վերջում առկա տուժած տարածությունը, մեզ թվում է, որ այստեղ պետք է լինի LuZA · [D.M. MA?] նշանների կոմբինացիան՝ «բարգործ վարպետ (?)» նշանակությամբ: Ելնելով վերոհիշյալից, կարծում ենք, որ սույն աղյուսակի 10-րդ տողում, ըստ երևույթին, հիշատակվում է Արիլիանի ցեղի որոշակի զբաղմունքի տեր բնակիչ, այսինքն՝ «արիլիանցի քարզործ վարպետ»: «Արիլիանցի» վերացական գոյականը ծագում է Արիլիանի՝ Երկրի (ցեղի) անունից, որը ուրարտական վիճագրերի հետազոտողները արգարացիորեն համեմատում են միջնադարյան Հայաստանի «Արեղեան-ք» Abelean-kh² մարզի անվան հետ, որի տերիտորիան այն ժամանակ ընկած է եղել Արաքս գետի վերին հոսանքում:

Հրատարակվող փաստաթուղթի երրորդականում է 11-12-րդ տողերով, որոնք վերածանվում են հետևյալ կերպ. NApu-lu-si-ni-[li?]³ 'a-al-di-tu-ū-[li?]³: NApulusini բառը ուրարտական վիճագիր հուշարձաններում հանդես է գալիս շատ հաճախ՝ և ունի «(արձանագրված) քարակոթող», «արձանագրություն» իմաստը. իսկ ինչ վերաբերում է 'al-di-tuli բառին, ապա այն իրենից ներկայացնում է անցյալ-կատարյալ ժամանակի, հոգնակի թվի, երրորդ դեմքի անցողիկ բայ ('al·a·id·t(u)- բայահիմքից), օրյեկտային -li ցուցիչի հետ միասին: Այդ նույն բայը, բայց եզակի թվով, հանդես է գալիս ոչ միայն քաղաքի վիճագրերում, այլև արձանագրության մեջ (YKH, 264, ուրարտ. տեքստ, տող 3, 20 = ասուր. տեքստ, տող 3, 19): Երկրկվյան այս արձանագրության մեջ ուրարտերեն 'aldubi բառին ասուրական տեքստում համապատասխանում է al-ti-i-sa բառը, որը պրոֆ. Մ. Ծերեթելին տերում է se'u բայարմատից և թարգմանում՝ «տանել, դիտել, նայել, որոնել, փնտրել» և այլն: 'al·d(u)- բայի մեկնարանման շարժք որոշ չափով այլ կարծիք է հայտնում պրոֆ. Յ. Ֆրիդրիխը, որը նրան տալիս է «անել, կատարել, պատճառել, ստիպել» և այլ նման իմաստներ: Պրոֆ. Գ. Ա. Մելիքիշվիլին, հետևելով վերոհիշյալ հեղինակներին, այդ ուրարտերեն բառը դարձյալ նույնացնում է ասուրերեն al-ti-i-sa բառի (se'u բայահիմքից՝ «որոնել, հոգ տանել» և այլն իմաստով) և կարծում է, որ այն, ըստ երևույթին, ունեցել է «հոգ տանել, բարերարություն անել, պահպանել, փրկել» և այլ նման իմաստներ: Այլ կարծիք է Ի. Մ. Գյակոնովը, որը, վիճարկելով ասուրերեն al-ti-isu բառի հիշյալ մեկնարանումը, այն տերում է le'u (և ոչ se'û) արմատից՝ «հաղթահարել»

¹ Տե՛ս Դ. Ա. Меликишвили, УХН, 127 I, տող 17, 155 С, տող 7, 21, 35, 37-Բ, տող 15:

² Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 110, 190. Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիգրիս, 1904, էջ 15, 58, 67: «Սեանիա Երազմանու մասնագրությունը» (Ա. Գ. Արրահամյանի հրատարակությամբ, Երևան, 1944), էջ 3.0 և այլուր: Այդ տեղանվանը վերջավորությունը ներկայացնում է հոգնակի ուղղականի հոլովական ցուցիչ և ակնարկում է տվյալ աշխարհագրական տերիտորիայի բնակիչների մասին:

³ Այս նշանները վերականգնված են մեր կողմից: Տե՛ս աղյուսակի դիտական տառագրածմունք վերաբերող համադրատախան ծանոթագրությունները.

⁴ Տե՛ս Դ. Ա. Меликишвили, ВДИ, 1954, № 1, էջ 214:

⁵ Տե՛ս Դ. Ա. Меликишвили, УХН, ВДИ, 1954, № 1, էջ 195-196:

⁶ Տե՛ս М. Tseretheli, Die Neuen haldischen Inschriften König Sardurs von Urartu, Heidelberg, 1928, էջ 38:

⁷ Տե՛ս J. Frick, Beiträge zu Grammatik und Lexikon des Chaldischen, 2 Teil, Caucasia, 8, Leipzig, 1931, էջ 133 և ծանոթ. 1. նույն հեղինակի, Einführung ins Urar-täische, Leipzig, 1933, էջ 51:

⁸ Տե՛ս Դ. Ա. Меликишвили, УХН, ВДИ, 1954, № 1, էջ 195:

իմաստով: Հետևաբար, աստուերեն *alti'sa* և ուրարտերեն *'aldubi* բառերը, Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, կարող են նշանակել «հաղթահարեցի-ես-ներան»¹:

Մերին ակոսաներով պետք է նշենք, որ հրատարակվող սեպագիր աղյուսակը, դժբախտաբար, կոչված չէ թերևս այս կամ այն չափով ճշտելու ուրարտերեն *'ald(u)*-բառի իմաստը: Մնդիրն այն է, որ սույն փաստաթուղթը, դարձանալի ձևով, կարծես թե հակում ունի արդարացնելու հիշյալ բային տրվող թե՛ «հոգ տանել», թե՛ «հաղթահարել» իմաստները: Սակայն նկատի ունենալով արձանագրությունների հաղթանակների մասին պատմող անքատերը, որոնցում հաճախ հանդիպում է *'ald(u)*- բայը, մենք հակված ենք, հետևելով Ի. Մ. Դյակոնովին, այդ բայը մեկնաբանելու «հաղթահարել» իմաստով, քանի որ նման անքատերում, որպես կանոն, պատմվում է մի շարք երկրների ու ցեղերի տերությունների նվաճման և այնուհետև, ուրարտական աստուերյանը՝ զանազան չհաղթահարվող մի ուրիշ երկրի նվաճման հետ կապված խոչընդոտները հաղթահարելու (*'aldubi*) մասին:

Անդրադանալով աղյուսակի 11-րդ տողի *NA.pulusinili* բառի մեկնաբանությանը, անհրաժեշտ է նշել, որ այն, տվյալ դեպքում, հանդես է գալիս ոչ միայն Քարակոթող-նեք, Քարձանագրություններ՝ կամ Քարձանագրված քարակոթողներ՝ բառացի իմաստով, այլև, ինչպես կուսում է Ի. Մ. Դյակոնովը, երկրների ու ցեղերի տերությունները սահմաններն արտահայտող քարակոթողների կամ սահմանաքարերի իմաստով: Եվ այսպես, սույն աղյուսակի 5-5-րդ տողերը, որոնք պատմում են Թուսայի որդի Սարգուրի թագավորի հրամանի մասին՝ այդ հոգերի անջատման և Կուտուրիլի ցեղի Սուերա(?) կուսվածքին տրամադրելու կապակցությամբ, որոնք, ըստ երևույթին, նախքան այդ հրամանը մտել են Կուղուհիլի քաղաքի հողային տարածությունների կազմը, կարծես թե ակնարկում են տեքստի 11-րդ տողում հիշատակված քարակոթողների հենց այդպիսի նպատակադրության մասին: Հետևաբար, այստեղ մենք զործ ունենք նախկին քարակոթողների կամ սահմանաքարերի տեղափոխման կամ նորերի հաստատման հետ, որպիսի հազամանքը, իսկապես, պայմանավորված է որոշակի զծվարությունների, որոնք, Սարգուրի թագավորի վերահիշյալ հրամանի համաձայն, պարտավոր էին հաղթահարելու (*'alditili*) զիլդինեցի չինոֆիկը և արիլանեցի քարզործ վարպետը:

Եվ այսպես, հրատարակվող փաստաթուղթի ամբողջ տեքստը, վերը շարադրվածի հիման վրա, վերապահում անելով առանձին ընթերցումների պայմանականությունը և կասկածելի լինելը, հնարավոր ենք համարում թարգմանելու հետևյալ կերպ.

- (1) Սարգուրին
- (2) Թուսայի որդին
- (3) տվեց հրաման
- (4) ուղիք(?) » Շանեցուն
- (5) (այն) հողերը » (որոնք գտնվում են) Կուղուհիլի քաղաքում
- (6) երկու ստրուկների հետ(?) » (ինչպես) ես-անջատեցի(?)
- (7) հողամասից » վերադարձրո՛ւ:
- (8) Սուերա(?) կուսվածքին(?) » Կուտուրիլի ցեղի
- (9) զիլդինեցի(?) չինոֆիկը(?) (և)
- (10) արիլանեցի քարզործ վարպետը(?)
- (11) քարակոթողները (սահմանաքարերը)
- (12) հաղթահարելին

Հանրադրմանը բերելով ամբողջ վերը շարադրվածը, գալիս ենք այն եզրակացության, որ մեր այդ կսվե սեպագիր աղյուսակը իրենից, ըստ երևույթին, ներկայացնում է վարչա-իրավական կարգի մի փաստաթուղթ, որը պատմում է այն մասին, թե ուրար-

¹ Տե՛ս ВДН, 1956, № 2, էջ 67-68, ծանոթ. 3:

² Տե՛ս ВДН, 1957, I, տող 5-11, II, տող 15-16, IV, տող 53-56, 155A, տող 13-18, V, տող 4-6 և այլն և այլն:

³ Հմմտ. հայկական թագավոր Արտաշես Ա-ի (և, դարև առաջին ևս մ. թ. ա.) ժամանակաշրջանի՝ Հայկական ՍՍԻ Սեանի շրջանում հայտնաբերված արամեական արձանագրությունները: Տե՛ս А. М. Дьяконов, К. Б. Старовоз, П. И. Артакеян (Артакеян А.), царя Артакеяна, ВДН, 1955, № 2, էջ 161-174 Գ. Ա. Տիրացյան, Արտաշես Ա-ի արամեական նորագյուտ արձանագրությունը, ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 10, էջ 105-109: Զ. Ա. Մալուխով, Հնագիտի օրագրից «Սովետական հայաստան» թերթ, Երևան, 1957 թ., օգոստոսի 20, № 195 (11.112):

տական թագավոր Սարգուրի I-ի հրամանով, որը իշխել է 645-635(?) թթ. մ. թ. ա., Կուզունիյի քաղաքի հողերը (կամ նրանց մի մասը), որոնք մինչ այդ հրամանը հավանաբար մեկ են Շանի ցեղի տերիտորիալ կազմի մեջ, երկու ստրուկների հետ միասին (որոնք այն ժամանակ, ըստ երևույթին, զբաղվում էին այդ հողերի մշակմամբ) պետք է անջատվեին ինչ-որ հողամասից (բառացիորեն՝ «տանից», զույգ Շանի ցեղին պատկանող ընդհանուր հողատարածությունից) և վերադարձվեին կամ հանձնվեին Կուտուրիլի ցեղի Քուեբա(?) կառավարչին, ըստ որում Գիդինի(?) և Արիլիանի ցեղերի կամ երկրներին որոշակի զբաղմունքի տեղ բնակիչներ, այսինքն՝ զիդինեցի չինոֆուիկը(?) և արիլիանեցի բարդործ վարպետը(?), այդ նույն հրամանի համաձայն, պարտավոր էին հաղթահարելու այն բոլոր խոշոր գոտները, որոնք կապված էին հիշյալ սահմանափակների կամ քարակոթողների տեղափոխման կամ հաստատման հետ:

Եկատի ունենալով հենց այն հանդամանքը, որ Արիլիանին և Գիդինին, որոնց ներկայացուցիչները պետք է կատարեին հրամանում նշված արարողությունները, եղել են, ամենայն հավանականությամբ, հարևան աշխարհադրական տերիտորիաներ, ապա մենք շատ ավելի հակված ենք կարծելու, որ Շանի և Կուտուրիլի ցեղերը այն ժամանակ եղել են վերահիշյալ երկրներին հարևան ցեղեր¹: Փաստերի այդպիսի մեկնաբանման զեպքում, հրատարակվող աղյուսակի Թեյշեբալինի բնիչները հանդամանքները մնում են չլուսարանված²:

Սյուս կողմից, Արիլիանի և Գիդինի երկրները (ցեղերը) մինչ այժմ մեզ հայտնի են եղել սոսկ VII դարի (մ.թ.ա.) աղբյուրներից (տե՛ս Արդիշտի I-ի և Սարգուրի II-ի տարեգրությունները)³: Տվյալ փաստաթուղթը (եթե հաշվի առնենք, որ նա վերաբերում է մ.թ.ա. VII դարի երկրորդ կեսին թագավորած Սարգուրի I-ի ժամանակաշրջանին) զգալի չափով ընդարձակում է մեր տեսադաշտը՝ այդ երկրների գոյություն ժամանակահատվածի շրջանակներն ինքնակալ:

НОВОНАЙДЕННАЯ КЛИНОПИСНАЯ ТАБЛИЧКА ИЗ КАРМИР-БЛУРА

Н. В. АРУТЮНЯН

(Р е з ю м е)

Публикуемая клинописная табличка была найдена в 1956 г. в одном из помещений, расположенных на северо-западном склоне Кармир-блур (урартск. Тейшебаини).

Табличка представляет, по-видимому, царский приказ административно-правового характера, в котором говорится, что по повелению урартского царя Сардури III (645—635 гг. ? до н. э.) земли (или часть земель) города Кудунилы, вместе с двумя рабами, должны были быть отделены от какого-то земельного участка (быть может от общего земельного участка племени Шани) и возвращены правителю Хуэра племени Кутубили. При этом представители определенных профессий стран или племен Дидини(?) и Абилиани, т. е. дилчинец-чиновник(?) и абиланиец-резчик по камню(?), на основании этого же приказа, должны были одолеть препятствия, связанные с перемещением или установлением межевых камней или стел.

Имея в виду, что Абилиани и Дидини, представители которых должны были выполнить упомянутые в приказе предприятия, были, очевидно, соседними географическими местностями, не исключена возможность, что племена Шани и Кутубили жили в то время по соседству с указанными выше странами.

С другой стороны, страны (племена) Абилиани и Дидини до сих пор были известны лишь по источникам VIII в. до н. э. Данный документ (имея в виду, что он относится ко времени царя Сардури III, правившего во второй половине VII в. до н. э.) значительно расширяет наше представление о хронологических рамках существования как Тейшебаини, так и упомянутых стран.

¹ Երևելով զբաղից, Շանի (Կուզունիյի քաղաքի հետ միասին) և Կուտուրիլի ցեղերի Կուարլինի կամ Կուրլինի մարզին (որի տերիտորիալ կազմն է մեկը, ակնհայտաբար, Թեյշեբալինին) հարևան լինելը մենք համարում ենք քիչ հավանական.

² Գույն այն ժամանակ ուրարտական թագավորը գտնվել է Թեյշեբալինիում: